ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **20.12.2021թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)՝ 2021 թվականի նոյեմբերի 22-ին կայացած նիստի արդյունքում անդամների 1/3-ից ավելիի առաջարկով (Ա. Ասոյան, Լ. Նանուշյան, Ա. Խոջոյան, Վ. Հովհաննիսյան, Հ. Պողոսյան, Շ. Դանիելյան, Վ. Պետրոսյան)՝ Տեսչական մարմնի 2021 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը քննարկելու և հաստատելու նպատակով որոշվել է անցկացնել էլեկտրոնային քվեարկություն:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021 թվականի դեկտեմբերի 17-ին և ավարտվել 2021 թվականի դեկտեմբերի 20-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարց.

Հարց 1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման քննարկում և հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Լ. Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Խոջոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Վ. Հովհաննիսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Քվեարկությանը չի մասնակցել՝

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց կողմ,
3) Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը քվեարկեց կողմ,
5) Ք. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6) Վ. Հովհաննիսյանը քվեարկեց կողմ,
7) Հ. Պողոսյանը քվեարկեց կողմ,
8) Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 8 կողմ, 0 դեմ:

Խորհրդի անդամներից 1-ը չի քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ